ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 27.11.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/73

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2017թ. թիվ 03/26-3/20434-17 գրությամբ «Տիգվակո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատախազության 06.11.2017թ. թիվ 44/10.1/9331-17 գրության հիման վրա, 09.11.2017թ. թիվ 03/26-3/20434-17 գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Տիգվակո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝

Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Տիգվակո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Տիգվակո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ուղղված 14.11.2017թ. գրությամբ հայտնել է, որ առկա չեն Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերը՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. հայտ է ներկայացրել և մասնակցել ՀՀ դատախազության կողմից հայտարարված «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.10.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1.5 կետի համաձայն՝ Ընկերությունը 5-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, իսկ 1-ին չափաբաժնի մասով՝ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության նույն կետի համաձայն՝ հանձնաժողովը որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

Պատվիրատուն 25.10.2017թ. հարցում է ուղարկել Կոմիտե:

Կոմիտեի կողմից 25.10.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տիգվակո» ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 40 938 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություններ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Ընկերությունը դիմել է Կոմիտե և խնդրել տրամադրել տեղեկատվություն «Տիգվակո» ՍՊԸ-ի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան Ընկերության հարցմանը՝ Կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից 10.11.2017թ. տրամադրվել է տեղեկանք, որի համաձայն՝ «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն, այլ ունի դեբետային մնացորդ 67 716 ՀՀ դրամի չափով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար ՀՀ դրամը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող

եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվա հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը

ներկայացրել են մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Այսպիսով՝ Ընկերությունը գտնում է, որ «Տիգվակո» ՍՊԸ-ին ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հանգամանքով պայմանավորված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն, քանի որ Ընկերությունը Կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից 10.11.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն՝ 23.10.2017 (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն, այլ ունի դեբետային մնացորդ 67 716 ՀՀ դրամի չափով:

Բացի այդ, «Տիգվակո» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերությունը չի խախտել պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից չի հրաժարվել պայմանագիր կնքելուց և հայտերը բացելուց հետո չի հրաժարվել գնման գործընթացին հետագա մասնակցությունից, այսինքն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերը բացակայում են, իսկ տվյալ հիմքերի բացակայության պայմաններում Ընկերությանը ցուցակում ներառելու հիմքերը ևս բացակայում են:

Ընկերությունը նշել է նաև, որ Պատվիրատուի կողմից խախտվել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, քանի որ Ընկերության հայտը մերժելու ժամանակ, հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ «Տիգվակո» ՍՊԸ-ի ենթադրյալ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների չափը կազմել է 40 938 ՀՀ դրամ, այսինքն՝ այն չի գերազանցել հիսուն հազար ՀՀ դրամը:

Ելնելով վերոգրյալից՝ «Տիգվակո» ՍՊԸ-ն վերոհիշյալ գրությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին խնդրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.11.2017թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերը նշված գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ դատախազության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ դատախազությունը (այսուհետ՝ Պատվիրատու) 06.11.2017թ. թիվ 44/10.1/9331-17 գրությամբ հայտնել է, որ ՀՀ դատախազության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 5-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Տիգվակո» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 14.11.2017թ. ժամը 10:40-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել է ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ԱՄ-2017/73 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ՍՑ-ԱՄ-2017/73 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատախազության կողմից ՀՀ դատախազության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. հայտ է ներկայացրել:

2. «Տիգվակո» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

3. Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 8 չափաբաժինների մասով, որոնցից առավելագույն գնային առաջարկը կազմել է 288 000 ՀՀ դրամ՝ 5-րդ չափաբաժնի համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.10.2017թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տիգվակո» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 5-րդ չափաբաժնի մասով:

5. ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 25.10.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 40 938 ՀՀ դրամի չափով:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2017թ. ժամը 12:00-ի նիստի արձանագրությամբ կայացված որոշմամբ «Տիգվակո» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

7. Ընկերության կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից 10.11.2017թ. տրամադրված թիվ 789 տեղեկանքը, համաձայն որի ***Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

Նույն տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ ունեցել է 3866 ՀՀ դրամի սոցիալական վճարի գծով վճարման ենթակա գումար:

8. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 14.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/20764-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ:

9. Ի պատասխան ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 14.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/20764-17 գրությանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.11.2017թ. թիվ

1/6-1/48954-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:

5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2017թ. թիվ 03/26-3/20434-17 գրությունը, ՀՀ դատախազության 06.11.2017թ. թիվ 44/10.1/9331-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 23.11.2017թ. թիվ 1/6-1/48954-17 գրությունը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը

համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ դատախազության կողմից ՀՀ դատախազության կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-17/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Տիգվակո» ՍՊԸ-ն **23.10.2017թ.** հայտ է ներկայացրել:

Ընկերությունը հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ Ընթացակարգի 8 չափաբաժինների մասով, որոնցից առավելագույն գնային առաջարկը կազմել է 288 000 ՀՀ դրամ՝ 5-րդ չափաբաժնի համար:

Ընթացակարգի շրջանակներում ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով և 44-րդ կետով սահմանված կարգով 25.10.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություն՝ 40 938 ՀՀ դրամի չափով:***

Հիմք ընդունելով «Տիգվակո» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց

հարկային պարտավորություն ունենալու փաստը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 01.11.2017թ. ժամը 12:00-ի նիստի արձանագրությամբ կայացրած որոշմամբ «Տիգվակո» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

Խորհուրդն արձանագրում է, որ «Տիգվակո» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից 10.11.2017թ. տրամադրված թիվ 789 տեղեկանքը, համաձայն որի ***Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

Տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ ունեցել է 3866 ՀՀ դրամի չափով սոցիալական վճարի գծով վճարման ենթակա գումար:

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 14.11.2017թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/20764-17 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին, խնդրելով հայտնել, թե «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) ունեցել է արդյոք ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, թե ոչ, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 23.11.2017թ. թիվ 1/6-1/48954-17 գրությամբ հայտնել է, որ ***Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ:***

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից 23.11.2017թ. թիվ 1/6-1/48954-17 գրությամբ ներկայացված «Տիգվակո» ՍՊԸ-ի 23.10.2017թ. դրությամբ մնացորդների վերաբերյալ տեղեկանքի համաձայն՝ Ընկերությունը 23.10.2017թ. դրությամբ ունեցել է 3866 ՀՀ դրամի չափով սոցիալական վճարի գծով վճարման ենթակա գումար:

Այսպիսով հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով սահմանված սոցիալական վճարը չի համարվում հարկային պարտավորություն կամ պարտադիր սոցիալական ապահովության վճար, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի հարկ վճարողների սպասարկման վարչության թիվ 5-րդ բաժնի կողմից 10.11.2017թ. տրամադրված թիվ 789 տեղեկանքը և ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի

23.11.2017թ. թիվ 1/6-1/48954-17 գրությունը, համաձայն որոնց՝ «Տիգվակո» ՍՊԸ-ն 23.10.2017թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2017թ. թիվ 03/26-3/20434-17 գրությամբ «Տիգվակո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00874609) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ